600.0085.08.12.03

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱԿԱՆ ՄԵՆԱՇՆՈՐՀՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

8 դեկտեմբերի 2003 թվականի №85Ա
ք. Երևան

ՋԵՐՄԱՅԻՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ՍԱԿԱԳՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի ա) ենթակետը, 21-րդ, 22-րդ հոդվածները՝ Հայաստանի Հանրապետության բնական մենաշնորհների կարգավորման հանձնաժողովը **ո ր ո շ ու մ է.**

1. 2003-2004 թվականների ձմռան ժամանակաշրջանում «Գյումրուն տաք ձմեռ» փակ բաժնետիրական ընկերության կողմից իրականացվող կենտրոնացված ջեռուցման համար սահմանել հետևյալ սակագները՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը.

		Ջեռուցման տևողությունը (օր)	Բնակչության ջեռուցման համար		Այլ սպառողների ջեռուցման համար (դրամ/ԳՋ)
			(դրամ/մ^2)	(դրամ/ԳՋ)	
1	Քաղաք Գյումրի	120	2596	2520	2520
2	Գյուղ Մայիսյան	120	1505	1951	-

2. Հաշվառքի սարքերի բացակայության դեպքում բնակչությանն առաքվող ջերմային էներգիայի հաշվարկման համար կիրառվում է մեկ մ^2 բնակելի մակերեսի համար սահմանված սակագինը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2004 թվականի հունվարի 8-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱԿԱՆ ՄԵՆԱՇՆՈՐՀՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Ռ. ՆԱԶԱՐՅԱՆ**

ք. Երևան
8 դեկտեմբերի 2003թ.
ժամը 15^{00}